լացով, ողբով հրաժեշտ տուեց իր հայրենիքին եւ քահանաներն առնելով եկեղեցիների բանալին, ձգեցին Երասխի մէջ, նրա պահպանութեան յանձնելով իրանց հայրենիքը։ Երբ Թահմազ Ղուլի Բէգը բերեց հասցրեց ջուղայեցիներին Երասխի ափը, Շահի բանակը, վերջինս մեծ կարեկցութիւն ցոյց տուեց նրանց եւ հրամայեց զօրքին օգնել ու ձիերով եւ ուղտերով անվնաս փոխադրել նրանց գետի միւս ափը. ապա իմանալով, որ Թահմազ Ղուլի Բէգն չէ կործանել ջուղայի շինութիւնները, Շահը բարկացաւ եւ հրամայեց անմիջապէս վերադառնալ ու աւերել. շուտով կատարուեց այդ հրամանն եւ 15 օր ամբողջ հրդեհն աւերում էր ջուղայի շինութիւնները։ Դրանով Շահաբբաս կամեցաւ միանգամայն կտրել ժողովրդի յոյսը՝ վերադառնալուց։

Ինչպէս երեւում է, ջուղայեցիներն առանձին նեղութիւն չկրեցին տարագրութեան ժամանակ. նախ՝ որովհետեւ Շահն առանձին խնամք էր ցոյց տալիս նրանց, երկրորդ՝ հարուստ լինելով, նրանք ընծաների եւ փեշքաշների միջոցով կարող էին ազատ մնալ հարստահարութիւնից. վերջապէս, այն հանգամանքը, որ դեռ մինչեւ այսօր Նոր-Ջուղայում գանուում են մեծածաւալ եւ թանկագին ձեռագիրներ, որոնք, անկասկած, ջուղայեցիները բերել են իրանց հետ, պարզ ցոյց է տալիս, որ նրանք իրանց հետ կարողացան տեղափոխել եթէ ոչ իրանց ամբողջ գոյքն եւ հարստութիւնը, գոնէ նրանց մի նշա-